



Ճանապարհ Խաչի

Տիրամայր Նարեկի
Հայ կաքողիկէ Եկեղեցի
ի Մոնթէալ

Ճանապարհ Խաչի

*Աղօքֆ՝
Խաչի ճանապարհէն առաջ*

Ո՞վ Յիսուս, կ'ուզեմ այս պահուս ընկերանալ
ֆեզի Գողգոռայի տաժանելի ճանապարհին վրայ,
խորհդածելով քու չարչարքնեներուդ վրայ,
բաժնելով քու ցաւերդ եւ աղերսելով քու գութդ ու
ողորմութիւնդ մեզի եւ բոլոր մեղաւորներուն
համար:

Ըրէ՛ որ ըմբռնենք արժէքը քու
չարչարանքներուդ, լեցո՛ւր մեր սրտերը
կարեկցութեամբ՝ հանդէպ քու ցաւերուդ, որպէսզի
մենք ալ ցաւինք մեր մեղքերուն վրայ եւ աւելի մեծ
սիրով լեցուինքն ֆեզի հանդէպ:

Ընդունէ՛ մեզ՝ մեր մեղքերով ու
տկարութիւններով, բայց նաև մեր բարի գործերով
ու բաղանքներով:

Տուր մեզի Ս. Հոգիդ, որպէսզի ճանչնանք մեր
խեղնութիւնը եւ շանանք աւելի սրբանուէր կեանք մը
ապրիլ:

Յիշէ՛ մեզ քու անսահման ողորմութեամբդ,
զբա՛ մեր ննջեցեալներու հոգիներուն վրայ եւ մեզ
բոլորս արժանացո՛ւր անանց եւ երանաւէտ
արժայութեանդ:

Առաջին կայան

Յիսուս մահուան կը դատապարտուի

-Երկրպագութիւն կ'ընեմ ժեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեմ ժեզ:

-Որովհետեւ սուրբ խաչով աշխարհը փրկեցիր:

Ո'վ Տէր Յիսուս, դուն մարդոց աւետելէ եսք
փրկութեան աւետիսը, սէր քարոզելէ եսք ամէնուն,
հրաշքներով սփոփելէ եսք հիւանդներն ու
տառապողները, ահա մահուան կը դատապարտուիս:

Գիտակից եմ որ ես ալ, եթէ ուզեմ հնանելի քու
օրինակիդ՝ պիտի դատապարտուիմ մարդոցմէ, եւ
ասոր համար վախր կը պատէ զիս:

Օգնէ՛ ինձի որ քաջութիւնն ունենամ քու
աստուածութիւնդ դաւանելու մարդոց առջեւ,
ապրելու Աւետարանիդ համեմատ եւ ի հարկին,
զոհելու ամէն բան՝ վկայելու համար իբր քու
աշակերտ:

-Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն
քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամֆ քո, որպէս
յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր
մեզ այսօր, թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մե՞ք
թողումֆ մերոց պարտապահաց եւ մի տաճիր զմեզ ի
փորձութիւն: Այլ փրկեա ի չարէ: Զի քո է
արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս:
Ամէն:

-Փառք չօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Արրոյ:

**-Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:
Ամէն:**

**-Խաչեա'լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:**

Երկրորդ կայան

Յիսուս իր խաչը կը կրէ

**-Երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեմ քեզ:**

-Որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր:

**Ո'վ Յիսուս, դուն որ նոյնինքն անմեղութիւնն ու
սրբութիւնն ես, ոնքագործներու խաչը ուսիդ առած
կը բախս դէպի Գողգոթա:**

**Այս խաչը՝ մեր ամենուն խաչն է, եւ զայն կը
կրես մեր մեղքերուն փոխարէն:**

**Դուն ըսիր. « Ով որ կ'ուզէ իմ աշակերտս ըլլալ,
քող խաչը առնէ եւ ետեւէս գայ»: Գիտեմ թէ ո՞քան
դժուար է քեզի հետեւիլ, բայց գիտեմ նաև որ քեզմէ
դուրս փրկութիւն չկայ:**

**Քաջութիւն տո՛ւր ինձի որ պահ մը չլիս քեզ
առանձին, այլ՝ բակելով քու կողքիդ, թեթեւցնեմ
խաչին բեռը որ ծանրացած է աշխարհի մեղքերով:**

-Հայր մեր, որ յերկինս ես...

-Փառք ձօր...

-Այժմ եւ միշտ...

**-Խաչեա'լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:**

Երգ

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց
Ոտք ընդ ոտից ընթանալեաց
Փայտ ընդ փայտի դառըն պլատոյ
Կեսանի ընդ մահու փոխարկելով
Ի մէջ երկուց անօրինաց
Կայր մերկացեալ տուողն օրինաց
Զոր ոչ տեսին ազգըն կուրաց
Բայց ի միոյն յաւագակաց:

Երրորդ կայան

Յիսուս խաչին ծանրութեան տակ կ'իյնայ
-Երկրագութիւն կ'ընեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեմ քեզ:
-Որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր:

Ո'վ Յիսուս, դո'ւն, աշխարհի Տէ՛րը, կ'իյնաս
խաչին ծանրութեան տակ, հասարակ արարածի
նման:

Ես ալ կ'իյնամ յաճախ եւ խղճակի կերպով, ի'մ
մեղքերուս ծանրութեան տակ եւ երբեմն դժուարաւ
կը վերականգնիմ, որովհետեւ կը մոռնամ քեզ
օգնութեան կանչել:

Իսկ երբեմն՝ կը մերժեմ կրել խաչս, չուզելով
հետեւիլ քու օրինակիդ, եւ այն ատեն կը զգամ քէ
ո'րքան խեղն եմ ու ապերախտ, լֆելով ու մատնելով
քեզ:

Օգնէ՛ ինձի, Յիսուս, որ սիրով ընդունիմ այն
փոքր կամ մեծ խաչերը որոնք իմ բաժինս են, եւ

որոնցմով ցոյց պիտի տամ հաւատարմութիւնս ու
սէրս ֆեզի հանդէպ:

Զօրացո՞ւր զիս, որ ո՛չ միայն ճամբայ ելլեմ ֆեզի
հետ, կրելով խաչս, այլ մինչեւ կեանքիս վերջին
շունչը ընկերակցիմ ֆեզի:

-Հայր մեր, որ յերկինս ես...

-Փառք Զօր...

-Այժմ եւ միշտ...

-Խաչեալ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Չորրորդ կայան

Յիսուս իր Մօրը կը հանդիպի

-Երկրպագութիւն կ'ընեմ ֆեզի, ո՛վ Յիսուս, եւ
կ'օրինեմ ֆեզ:

-Որովհետեւ սուրբ խաչով աշխարհը փրկեցիր:

Ո՛վ Յիսուս, կը գքամ ғու մօրդ վրայ: Անիկա
քայլ առ քայլ կը հետեւի ֆեզի, անձանօթ կնոջ մը
պէս, կորսուած՝ մոլեզնած ամբոխին մէջ, լուս
կրելով իր ցաւը, բաժնելով ғու տառապանքդ:

Մայրերու մէջ ո՞վ տառապեցաւ ғու մօրդ նման:

Բայց անիկա սիրով ընդունեցաւ ըմպել ցաւըրու
դառն բաժակէն, որովհետեւ ғու փրկչակիցդ պէտք է
ըլլար:

Ո՛վ Մարիամ, ֆեզի՝ կ'ապահնինք մեր
երկրաւոր ուղեւորութեան ընթացքին, որպէսզի
ըլլաս մեր հզօր բարեխօսը Որդւոյդ մօտ, որուն

մօտիկ եղար տեւապէս աշխարհի վրայ եւ այժմ կը
բաժնես անոր փառքը երկինքի մէջ:

-Հայր մեր, որ յերկինս ես...
-Փառք չօր...
-Այժմ եւ միշտ...
-Խաչեա՛լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Երգ

Ռոպէից արեգականն
Ըստիւն արար գիշերանման
Ըստուերըն քոյ արկ մերկութեան
Զի մի տեսցէ ակն անարժան
Ի միշօրեայն նըսեմացաւ
Յորժամ Աղամ մեղօֆ մեռաւ
Ի յիններորդն ի լոյս դարձաւ
Յորժամ մահուամբ մահըն լուծաւ:

Հինգերորդ կայան

Սիմոն Կիւրենացին կ'օգնէ Յիսուսին

-Երկրագութիւն կ'ըմեմ ժեզի, ո՛վ Յիսուս, եւ
կ'օրինեմ ժեզ:
-Որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր:

Անծանօթ մը, Սիմոն Կիւրենացին, միա՛կ
մարդը եղաւ որ օգնեց քու խաչդ կրելու, ո՛վ Յիսուս:
Ակամա՛յ օգնութիւն մը՝ զոր սակայն
չմերժեցիր դուն:

Որքա՞ն պիտի ուզէիր որ բարեկամներէդ, աշակերտներէդ մէկը մատուցանէր ֆեզի այդ ծառայութիւնը: Անոնք չկային, որովհետեւ սարսափի մատնուած՝ փախուստ տուէր էին:

Իսկ ես, Յիսուս, քանի^o անգամ խոյս տուած եմ երբ կանչած ես զիս որ օգնեմ խաչդ կրելու:

Առաքեալներուն նման, թռղած եմ ֆեզ առանձին, մինչ դուն՝ ի'մ մեղքերուս համար յօժարած ես կրել խաչդ, որ մեր բոլորին խաչն է:

Ըրէ՛ որ ես ալ, իբր ճշմարիտ քրիստոնեայ, գիտակից դառնամ թէ իմ խաչի բաժինս ունիմ կրելիք աշխարհի փրկութեան իմ բաժինս բերելու համար:

-Հայր մեր, որ յերկինս ես...

-Փառք ձօր...

-Այժմեւ միշտ...

-Խաչեա՛լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի բոլոր հոգիներուն:

Վեցերորդ կայան

Վերոնիքա կը սրբէ Յիսուսի երեսը

-Երկրպագութիւն կ'ընեմ ֆեզի, ո'վ Յիսուս, եւ կ'օրինեմ ֆեզ:

-Որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր:

Ո'վ Յիսուս, կին մը, Վերոնիքա, ամբոխին մէջէն, տեսաւ ֆեզ, տեսաւ արիւնյուայ դէմքդ եւ չդիմացաւ: Համարձակեցաւ նեղել ամբոխն ու

զինուորներու շղթան՝ քեզի մօտենալու եւ դէմքդ սրբելու համար:

Սհա՛ վկայութիւն մը սկրոյ եւ արկութեան որ չի կրնար անտարբեր թողով զիս: Կ'ուզեմ ես ալ մարդոց առջեւ վկայել թէ դուն Տէրս եւ Աստուածս ես, հակառակ նախատինքներուն ու հաղածանքներուն որոնց կ'Ենթարկուի՝ այն որ քեզ կը խոստովանի:

Խնդրեմ, տո՛ւր ինձի, ո՞վ Յիսուս, այնպիսի՝ հաւատք մը որ մղէ զիս յանձն առնելու ամէն նեղութիւն՝ քու Աւետարանիդ վկան դառնալու համար աշխարհի դիմաց:

–Հայր մեր, որ յերկինս ես...

–Փառք չօր...

–Այժմ եւ միշտ...

–Խաչեա՛ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի բոլոր հոգիներուն:

Երգ

Յօդէր արտօսը ցաւագին
Մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին
Յորժամ լրսէր բգծարակին
Բարբառելոյ իւր միածնին
Ետուն քացախ խառնեալ լեղի
Այնմ որ բըղիսեաց գետ յԱղենի
Եւ ի վիմէն վլտակ բարի
Արբոյց տոհմին դառնացողի:

Եօթներորդ կայան

Յիսուս երկրորդ անգամ կ'իջնայ

-Երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրհնեմ քեզ:

-Որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր:

Ով Աստուածային Փրկիչ, դարձեա'լ կ'իջնաս
խաչի ծանրութեան տակ, եւ անողորմ դահիները,
քեզ հրելով ու քաշկրտելով, աւելի կը սաստկացնեն
ցաւըրդ:

Մենք ա'յնքան յանախ կ'յինանք ու կը
մեղանչենք, ա'յնքան ծանր են մեր յանցանքները՝ ոք
խաչիդ ծանրութեան չես դիմանար, եւ կը կֆիս ու
կ'իջնաս:

Ո'վ պաշտելի Յիսուս, դուն ցաւով կը նկատես ոք
շատերը կ'արհամարհեն քու սէրդ, եւ շատ քիչերը
կ'օգտուին քու չարչանքներէդ, հակառակ քու
յայտնած բուռն փափաքիդ: Քու բարեկամներդ
անգամ կը լքեն քեզ, կ'անտեսնեն քու գոհարերումդ եւ
կը մեղանչեն քեզի դէմ:

Աւա'դ, ե'ս ալ անոնց թիւէն եմ, ե'ս ալ անարգած
եմ քեզ իմ ծանր յանցանքներովս եւ պատճառ
դարձած քու անհուն տառապաննեդ աւելի
ծանրացնելու:

Քու շնորհեդ է ոք զիս կանգուն կը պահէ
տակախն: Ըրէ՛ ոք երբեք գուրկ չմնամ անկից,
որպէսզի յարատեւնմ սիրոյդ մէջ եւ հասնիւ
յախտենական փրկութեան:

-Հայր մեր, ոք յերկինս ես...

-Փառքչօր...
-Այժմեւ միշտ...
-Խաչեա՛լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Ութերորդ կայան

Յիսուս կը մխիթարէ Երուսաղէմի կիները

-Երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեմ քեզ:
-Որովհետեւ սուրբ Խաչովդ աշխարհը փրկեցիր:

Մինչ Երուսաղէմի կիները կու լան քու վրադ,
դուն կը հրաւիրես գանոնք՝ լալու իրենց մեղերուն
վրայ, ո'վ Յիսուս:

Սրդեօֆ ես ալ, այդ կիներուն պէս, չե՞մ լար ու
ողբար ուրիշներու թերութիւններուն ու մեղերուն
վրայ, անտեսելով իմիններս: Չե՞մ նկատեր ամէնքը
յանցաւոր՝ բացի ինձմէ:

Որքա՛ն կը համբերես ինձի եւ իմ հոգեւոր
կուրութեանս, ո'վ Յիսուս:

Ըրէ՛ որ բացուին հոգւոյս աչքերը եւ տեսնեմ ու
նաև նամ իմ թերութիւններս, ուղղելու, սրբագրելու
եւ բաւելու համար գանոնք քու շնորհինդ
օգնութեամբ:

-Հայր մեր, որ յերկինս ես...
-Փառքչօր...
-Այժմեւ միշտ...
-Խաչեա՛լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Երգ

Դիմում յերբորդ ժամու օձին
Զմիստ նախնայ մօրն Եւայի
Ի վեցն անկեալ մարդն առաջին
Հաւանական բանիւ նորին
Ի սոյն ժամու Տէրն ի խաչին
Զի քաւեսցէ զմեղս նոցին
Եւ յորժամ ել Աղամըն հին
Եղ զաւազակն ի մէջ դրախտին:

Իններորդ կայան

Յիսուս երբորդ անգամ կ'իյնայ

-Երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեմ քեզ:
-Որովհետեւ սուրբ խաչով աշխարհը փրկեցիր:

Երբորդ եւ վերջին անկումդ է այս, տաժանելի
ուղեւորութեանդ ընթացքին, ո'վ Յիսուս: Շատ
չմնաց Գողգոթա հասնելու համար, ուր պիտի ըմպես
վերջին կաթիլը դառնութեան բաժակին:

Կը յիշեմ դարձեալ իմ բազմաթիւ անկումներս եւ
կը վախնամ որ յուսալքուիմ՝ տեսնելով
տկարութիւնս:

Զօրացո՞ւր զիս, ցո՞յց սուր ինձի սիրոյդ եւ
ողորմութեանդ նշանները, որպէսզի անվիատ
շարունակեմ նամքաս, հակառակ խոչընդուներուն
որոնիք կը ցցուին դէմս ամէն օր: Օգնէ՛ ինձի, որ ամէն
անգամ որ իյնամ, յիշեմ քեզ եւ վերականգնիս՝
ապաւինելով քու ողորմութեանդ:

-Հայր մեր, որ յերկինս ես...
-Փառք ծօր...
-Այժմ եւ միշտ...
-Խաչեա՛լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Տասներորդ կայան

Յիսուս կը մերկացուի իր զգեստներէն

-Երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեն՝ քեզ:
-Որովհետեւ սուրբ խաչով աշխարհը փրկեցիր:

Ո'վ Յիսուս, քեզ խոնարհեցնելու եւ
նուաստացնելու համար, դահիճներդ զգեստող
անգամ չքողուցին վրադ, այն զգեստը զոր մայրդ
այնին գուրգուրանենով պատրաստած էր քեզի
համար: Վիրաւոր մարմինդ ցուցադրուեցաւ այսպէս
կատղած ամբոխին:

Այդ մերկացումը մարմնական զրկում մը չէր
միայն, ո'վ Յիսուս, այլ անով ուզեցիր ցոյց տալ
խորհրդաբար թէ կը մերկանաս ամէն բանէ, ոչ
միայն նիւթէ, այլ այն ամէն ինչէ որ աշխարհը կը
յիշեցնէ կամ կը խորհրդանշէ:

Ըրէ՛ որ ես ալ անջատեմ սիրտս ամէն նիւթ-ական
եւ աշխարհային կապերէ եւ այն ամէն բաներէ որ
կրնան բաժնել զիս քեզմէ կամ խեղդել քու սէրդ իմ
մէջս:

Կ'ուզեմ սիրով զոհել ամէն բան քեզի որովհետեւ
քեզ ունենալով՝ ամէն բան ունեցած կ'ըլլամ:

-Հայր մեր, որ յերկինս ես...
-Փառք Հօր...
-Այժմ եւ միշտ...
-Խաչեա'լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Երգ

Փարելի բարբառ ընդ իմ
էլի էլի, առ Հայր գոչէր
Զինգին կամաւ Հօր աւանդէր
Զինգին մարդկան նոյն ընծայէր
Երկիր հիմամբ սասանեցաւ
Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ
Վէմֆ ի յինքնանց պատառեցան
Եւ գերեզմանք մահու բացան:

Տասնմեկերորդ կայան

Յիսուս խաչին վրայ կը գամուի:

-Երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեմ քեզ:
-Որովհետեւ սուրբ խաչով աշխարհը փրկեցիր:

Ահա հասաւ վախճանը քու առաքելութեանդ, ո'վ
Յիսուս: Հասաւ պահը ուր պիտի թողուս աշխարհը
խաչին վրայ գամուելով:

Գառնուկի նման թողուցիր որ գամեն ձեռքերդ
ու ոսքերդ, առանց գանգատի, առանց նիչ մը իսկ
արձակելու:

Ինձմեն ալ կը պահանջուի որ խաչուիմ քեզի հետ,
ով Յիսուս, մեռնելով աշխարհին եւ անոր
հրապոյրներուն: Ըրե՛ որ խաչը՝ որ ամէն օր դէմս
կ'ելլէ, հասարակ դէպէնրու մէջ թէ արտասովոր
առիթներով, գիտնամ ընդունիլ ու կրել առանց
տրտունջի եւ բողոքի, համոզուած ըլլալով որ քեզի
նմանելու անհրաժեշտ պայմանն է այդ:

-Հայր մեր, որ յերկինս ես...
-Փառք Հօր...
-Այժմ եւ միշտ...
-Խաչեա՛լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Տասներկուերորդ կայան

Յիսուս կը մեռնի խաչին վրայ

-Երկրպագութիւն կ'ընեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեմ քեզ:
-Որովհետեւ սուրբ խաչով աշխարհը փրկեցիր:

Երեսուներեք տարիներու պսակումն է ահա այս
պահը, ուր Հօրդ կը յանձննես հոգիդ, երեւութապէս
լ'ուած Ս.նկից, լ'ուելէ ետք մարդոցմէ:

Երեւոյթներէն դատելով, ճախողանենով կը
փակես երկրաւոր կեանքդ, յոգնութիւններդ ու
տառապանիներդ:

Բայց դուն բսած էիր արդէն, թէ «ցորենի հատիկը պէտք է մեռնի հողին տակ՝ որպէսզի պտուղ բերէ»:

Մարդկութիւնը այդ պահուն կը սպասէր, ո՞վ Յիսուս, իր փրկութեան ժամը տեսնելու համար: Երանի՝ ապարդիւն չմնան ոչ ո՛վի համար քու չարչարաներդու մահդ:

Թող ո՛չ մէկ մեղաւոր կորսուի, այլ հաւատայ քեզի եւ փրկուի, ինչպէս եղած է քու բաղձանեֆդ՝ խաչին մահը ընդունելով քու Հօրդ կամֆին համաձայն:

-Հայր մԵր, որ յերկինս ես...

-Փառք Հօր...

-Այժմ եւ միշտ...

-Խաչեա'լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի բոլոր հոգիներուն:

Երգ

Քարոզի ի սբանչելեացս

Աստուած մարմնով վասն իմ խաչեալ

Մերով բնութեամբըս մեռանի

Աստուած անմահ խոստովանի

Կրրկնավրտակ կողին աղբերբ

Եկեղեցի իւր հաստատի

Զրովըն մաքրի, զարիւն ըմպէ

ԶՈՐԴԻ ընդ Հօր փառաւորէ:

Տասներեքերորդ կայան

Յիսուս կը յանձնուի իր Մօրը

-Երկրպագութիւն կ'ըմեմ քեզի, ո'վ Յիսուս, եւ
կ'օրինեմ քեզ:

-Որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր:

Վերջին անգամն ալ ըլլալով, մայրդ սեղմեց իր
կուրծքին քու աստուածային մարմինդ, անկենդան,
ո'վ Յիսուս:

Խաղաղութիւնը իջած է այլեւս տառապած
մարմնիդ վրայ, քանի կէտ առ կէտ կատարեցիր Հօրդ
քեզի յանձնած առաքելութիւնը:

Մեզի ալ կը յանձնուի մարմինդ, բայց այլեւս ո'չ
անկենդան՝ Սուրբ Հաղորդութեան մէջ:

Մօրդ պէս, մենի ալ ընդունինք գայն յարգանենով
ու սիրով, պահենի զայն մեր սրտին մէջ
խանդաղատանենով, հեռու մնալով ամեն մեղքէ որ
անհաշտ է քու ներկայութեանդ հետ մեր մէջ:

Քեզմով թող սնանի տեւապէս մեր հոգին, քեզմէ
թող ստանայ կեանի եւ ուժ որպէսզի կարենայ ապրիլ
քու շնորհիդիդ եւ սիրոյդ մէջ մինչեւ հասնի
յաւիտենական երջանկութեան:

-Հայր մ՞եր, որ յերկինս ես...

-Փառք Հօր...

-Այժմ եւ միշտ...

-Խաչեա՛լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Տասնչորսերորդ կայան

Յիսուս գերեզման կը դրուի

-Երկրպագութիւն կ'ընեմ ժեղի, ո՞վ Յիսուս, եւ
կ'օրհնեմ ժեղ:

-Որովհետեւ սուրբ խաչով աշխարհը փրկեցիր:

Ահա՝ կը հանգչիս վերջապէս, Յիսուս,
գերեզմանին մէջ, որ կարճատեւ բնակարանդ պիտի
ըլլայ քու մարմնոյդ:

Կը խոնարհիմ յարգանքով ու կը պաշտեմ ժեղ
հեշտակներուն հետ որ երկու օր վերջ քու
յարութիւնդ պիտի աւետեն:

Մարդիկ կը կարծէին թէ վերջ գտաւ քու
գոյութիւնդ այդ գերեզմանին ժարին տակ, մինչ հոն
է որ կը սկսի քու փրկարար խորհուրդիդ
իրագործումը:

Ըրէ՛, ո՞վ Յիսուս, որ ըմբռնեմ արծէքը
չարչարանքին ու մահուան, որոնց դուն
ենթարկուեցար կամաւոր կերպով եւ որ բաժինն է
նաև մե՛ր կեանքին:

Կը հաւատամ, ո՞վ Յիսուս, որ երեք օր ետք
յարութիւն առիր, եւ կը սպասես մեզի
արքայութեանդ մէջ, մեզ ալ բաժնեկից դարձնելու
համար քու յարութեանդ եւ յաղթանակիդ: Ամէն:

-Հայր մեր, որ յերկինս ես...

-Փառք ձօր...

-Այժմ եւ միշտ...

-Խաչեա՛լ Յիսուս, ողորմէ՛ մեզի եւ Քաւարանի
բոլոր հոգիներուն:

Երգ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ
խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ
խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ
խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Աղօք՛ Խաչի ճանապարհէն ևսի՛

Ով Յիսուս, փրկիչ մարդոց, կը հաւատամ որ
խաչովդ յադրեցիր մահուան եւ մտար փառքի մէջ,
խաչովդ մեղքերուս բաւութիւնը յանան առիր եւ
դարձուցիր զիս Աստուծոյ զաւակ, իսկ աշխարհին՝
փրկութեան եւ երջանկութեան ճամբան ցոյց տուիր:

Օգնէ՛ ինձի որ ըմբռնեմ՝ թէ՛ փառքի
արժանանալու համար, պէտք է անցնիմ խաչի
ճանապարհէն:

Դարձն' որ զիս գործիք մը, զիտակից բայց իլու,
քու ձեռքերուդ մէջ՝ աշխարհի փրկութեան իմ
մասնակցութիւնս քերելու համար:

Ըրէ՛ որ ըլլամ օրէ օր աւելի արիասիրտ եւ միշտ
տրամադիր՝ կրելու քեզի հետ այն խաչը գոր կը
շարունակես կրել այսօր:

Արժանի դարձուր զի՛ս ըլլալու ժառանգորդ քու
շնորհեներուդ հնս, եւ փառքիդ՝ երկնեֆի մէջ:

Մասնակից ըրէ՛ զիս յաւիտենական
երջանկութեան քու փառաւորեալ Մօրդ եւ երանեալ
սուրբերուդ հետ: Ամէն:

Երկրպագութիւն Խաչի

Խաչի *f*n, Քրիստոս, Երկիր պագանեմբ եւ զուրք
Զարչարանս *f*n մեծացուցանեմբ. Եկայի
հաւատացեալ *f* Երկրպագեսուր Քրիստոսի
Աստուծոյ մերոյ, վասրն զի Եկն ի ձեռըն Խաչին
իւրոյ շնորհեաց պարգեւս աշխարհի:

Սուրք Աստուած, սուրք եւ հզօր, սուրք եւ
անմահ, ողորմեա մեզ:

Փառք սուրք Խաչիդ, ալէլուիա. սուրք Սիովինի,
ալէլուիա. Զարչարանացդ ալէլուիա:

Նշանեցաւ առ մեզ լոյս Երեսաց *fng*, եւ ետուր
ուրախութիւն սրտից մերոց:

Ի պտղոյ ցորենոյ, զինոյ եւ ձիթոյ իւրեանց
լցուցեր զնոսա:

Փառք սուրք Խաչիդ, ալէլուիա. սուրք Սիովինի,
ալէլուիա. Զարչարանացդ ալէլուիա:

Փառք եւ Երկրպագութիւն Հօր եւ Որդոյ եւ
Սրբոյ Հոգուոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից: Ամէն:

Փառք սուրք Խաչիդ, ալէլուիա. սուրք Սիովինի,
ալէլուիա. Զարչարանացդ ալէլուիա:

Խաչըն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն, սովաւ
ամենենամ զինց բարերանեմբ:

*Որ ի Հօրէ լուսոյ լոյս նառագայթեալ ի յերկրի,
եւ զաւագան գօրութեան հաւատացելոց. սովաւ
ամենեմբեան գթեզ քարերանեմնի:*

*Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ
ցուցաւ, ի յօգնութիւն ընդդէմ քշնամւոյն, սովաւ
ամենեմբեան ըզբեզ քարերանեմնի:*

Սրկ. Սուրբ խաչիս աղաչեսուի գՏէր, զի
սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ
կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ:
Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ
ողորմեա:

Քհն. Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց,
Քրիստոս Աստուած մեր, պահպանեա
զմեզ ընդ հովանեսու սուրբ եւ
պատուական խաչիւդ բով ի
խաղաղութեան. Փրկեա յերեւելի եւ
յաներեւոյթ քշնամւոյն.
արժանաւորեա գոհութեամբ
փառաւորել զենզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ
Հոգուոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից: Ամէն:

Օրինեալ եղերուի ի շնորհաց Սուրբ
Հոգուոյն, հանգերուի խաղաղութեամբ
եւ Տէր եղիցի ընդ ձեզ, ընդ
ամենեսեանդ: Ամէն:



2005